ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 379-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ՀՀ վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի՝ գործի դատաքննությունն սկսել 2018 թվականի հոկտեմբերի 23-ին՝ ժամը 10.00-ին:

3. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի՝ գործով զեկուցող նշանակել Սահմանադրական դատարանի դատավոր Ա. Թունյանին:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 8-րդ մասի հիման վրա՝ գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով:

5. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 7-րդ մասի՝ սույն գործով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունած մարմնին՝ ՀՀ Ազգային ժողովին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ

Ֆ. ԹՈՒԽՅԱՆ

6 օգոստոսի 2018 թվականի
ՍԴԱՈ-58